

## ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ ԱՌԱՋԻՆ ՍԵՐՆԴԻ ՄԱՆԿԱԿԱՆ

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1920-1950 ԹԹ.)

#### ՖԻՐՈՒՋԻՄՈՂԱԴԱՄ ՄԱՀՄՈՒԴ<sup>1</sup> (ԻՐԱՆ)

Հոդվածը նվիրված է մանկական գրականության ուսումնասիրությանը Իրանի սահմանադրական շրջանից հետո: Ուսումնասիրության առարկա է դարձել մասնավորապես սահմանադրությանը հաջորդող առաջին սերնդի մանկական գրականությունը, որն ընդգրկում է 1920-1950-ական թվականները:

**Բանալի բառեր** – Իրան, մանկական գրականություն, 1920-1950-ական թվականներ:

Պարսկական գրականությունը սահմանադրական իրադարձություններից ու 1919 թ. հեղաշրջումից հետո կարճ ժամանակահատվածի համար ընդմիջվեց և թուլացավ: Սակայն կարճ ժամանակ անց պարսկական չափածոյի և արձակի տիրույթում ի հայտ եկավ գրական զարգացումների նոր ալիք: Պարսկական բանաստեղծությունը փոփոխվեց կառուցվածքի ու բովանդակության առումով, սակայն որպեսզի մանկապատանեկան գրականությունը կարողանա օգտվել նրանից, և ստեղծվեն մանկական բանաստեղծություններ, դեռևս ժամանակ էր պահանջվում: Իսկ պարսկական արձակի համար առիթն ավելի բարենպաստ էր: Արևմտյան առանձին պատմվածքների ու վեպերի թարգմանությունը նախադրյալ ստեղծեց պարսկական նորագույն պատմվածքների ձևավորման համար: Մեծանուն գրողներ, այդ թվում՝ Ջամալզադեն, Բոզորգե Ալավին, Սադեղ Չուբաքը, Սադեղ Հեդայաթը և այլք, ասպարեզ եկան, ինչն էլ հող նախապատրաստեց մանկապատանեկան գրականության մեջ արժեքավոր ստեղծագործությունների ստեղծման համար:

Ինչպես աշխարհում քսաներորդ դարը կոչվեց «մանկան դարաշրջան», այդպես էլ Իրանում աննախադեպ շարժում սկսվեց մանկապատանեկան գրականության ոլորտում: Մանկական ուսուցողական առաջին գրքերի տպագրումից ի վեր, որի նախապատմությունը հասնում է մինչև սահմանադրական

---

<sup>1</sup> Իրան, Թերբաթե Հեյդարիյեհ, Իսլամական Ազադ համալսարանի Թերբաթե Հեյդարիյեհ մասնաճյուղ, պարսից լեզվի և գրականության բաժին (ամբիոն):

Ժամանակաշրջան, մինչ այն ժամանակ, երբ նախ՝ բարոյագիտության, ապա՝ մշակույթի նախարարությունը սկսեց միանման դարձնել դասագրքերը, գրականության ու գրական ժանրերի տեղն ու դերը դասագրքերում ուղեկցվեցին ինչ-որ զարգացումներով: Սահմանադրական ժամանակաշրջանում և 1920թ. հաջորդող տարիներին դասագրքերի միջոցով տեղի էր ունենում երեխաների առաջին ծանոթացումը գրականությանը, և քանի որ դասագրքերի հեղինակներն ավելի շուտ մանկավարժներն էին, և գրականությունը միմիայն գիտության ու գիտելիքի կամ խրատների փոխանցման համար էր օգտագործվում, մանկական գրքերի ու դասագրքերի մեծ մասը հատկացվել էին դիդակտիկ՝ «մանկավարժական գրականությանը»: Մեկ ընդհանուր հայացքով մանկական գրականությունն Իրանի սահմանադրական շրջանից հետո, համաձայն սոցիալ-քաղաքական իրողությունների, կարելի է ուսումնասիրել երեք շրջաններով.

- ✓ սահմանադրությանը հաջորդող առաջին սերնդի մանկական գրականություն (1920-1950 թթ.),
- ✓ սահմանադրությանը հաջորդող երկրորդ սերնդի մանկական գրականություն (1950-1980 թթ.),
- ✓ սահմանադրությանը հաջորդող երրորդ սերնդի մանկական գրականություն (1980-2010 թթ.):

Սահմանադրությանը հաջորդող առաջին սերնդի արվեստագետներն ու գրողները քաղաքական ու սոցիալական բազմաթիվ իրադարձությունների բովով անցան: 1920 թ. հեղաշրջման ժամանակ դազախ գինվորները Ռեզախանի ղեկավարությամբ գրավեցին Թեհրանը: Ռեզախանը նախ պատերազմի նախարարի պաշտոնում վերացրեց բազմաթիվ խռովություններ ու ավազակություններ, ապա 1922 թ. Ղաջարյան Ահմադ Շահի հրամանով նշանակվեց վարչապետի պաշտոնում: Նա սկզբում անհաջող փորձ արեց հանրապետական կարգերի հաստատման ուղղությամբ, սակայն 1924 թ. գահ բարձրացավ: Նա, ի վերջո, 1941 թ. դաշնակիցների կողմից Իրանի բռնագրավումից հետո Բրիտանիայի ճնշումների ներքո ստիպված հեռացավ գահից և երեք տարի անց իր մահկանացուն կնքեց Հարավային Աֆրիկայի Յոհաննեսբուրգ քաղաքում<sup>2</sup>: Այն ազատությունները, որ ի հայտ եկան սահմանադրական շրջանում, վերացան Ռեզախանի իշխանության օրոք: Բազմաթիվ գրողներ ու գրականա-

<sup>2</sup> Ռեզախանը Փահլավի թագավորության հիմնադիրն է Իրանում և վերջ տվեց Ղաջարյան թագավորությանը:

գետներ հալածվեցին, ոմանք աքսորվեցին կամ բանտերում հայտնվեցին<sup>3</sup>: 1941 թ. ամռանը Երկրորդ համաշխարհային պատերազմի կեսերին, երբ բրիտանական ու խորհրդային զորքերը ներխուժեցին Իրան, Ռեզա Շահ Փահլավին փաստացի աքսորվեց երկրից, և Մոհամմադեզա Փահլավին փոխարինեց հորը և գահ բարձրացավ: Նոր թագավորի հարաբերական անզորությունը և իրականում սահմանադրական սկզբունքների սահմանափակ հաստատումն ու դրանց վերականգնումը հատկապես սկզբնական շրջանի տարիներին հանգեցնում էին քաղաքական ոլորտի արագ զարգացումներին և ուժային մարմինների, հատկապես Ռեզա Շահի օրոք հիմնադրված բանակի սասանմանը: Հենց այդ շրջանում թարգմանության գործընթացը, որը սկիզբ էր առել «Դարոլֆոնունի»<sup>4</sup> հիմնադրմամբ, մուտք գործեց նաև պարսկական, այդ թվում և մանկապատանեկան գրականություն: Իրանում մանկական գրքերի թարգմանության ընթացքին կարելի է հետևել սկսած 1920 թվականից: 1920-1940 թթ. պարսկերեն թարգմանվեցին մի շարք արտասահմանյան պատմվածքներ, այդ թվում՝ Հանս Քրիստիան Անդերսենի պատմվածքները, որոնք Ալինադի Վազիրիի, Ռուհի Արբաբի և Մեհրի Ահիի ջանքերով մուտք գործեցին մանկական գրքերի հրատարակությունների շուկա և թափ հաղորդեցին մանկապատանեկան գրական զարգացումներին<sup>5</sup>: 1941-1950 թթ., այսինքն՝ Մոհամմադեզա Փահլավիի թագավորության առաջին տասնամյակում շուրջ 15 անգամ վարչապետ փոխվեց: Այսպիսով, սահմանադրությանը հաջորդող առաջին սերնդի գրողները ձևավորվեցին սահմանադրական շրջանի քաղաքական ու սոցիալական խնդիրներով ալեկոծված և վախով ու հույսով լի մթնոլորտում և ստեղծագործում էին տագնապալի ու հուսահատությամբ լի միջավայրում: Բնական է, որ արևմտյան գրական տեքստերից թարգմանված ստեղծագործությունները կարող էին ազդել այդ ժամանակաշրջանի գրական ստեղծագործությունների արարման վրա: Սահմանադրական շրջանի գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ գրականությունը միաձուլված է Իրանի ժողովրդի ժամանակակից կյանքի և նրա ճնշող խնդիրների

<sup>3</sup> Աբրահամյան Ե., Իրանը՝ երկու հեղափոխությունների միջև, «Նեյ» հրատ., Ա տպ., Թեհրան, 1998, էջ 124:

<sup>4</sup> Որոշ հետազոտողներ «Դարոլֆոնունը» համարում են Իրանի առաջին արդի դպրոցը:

<sup>5</sup> Հեջազի Բ., Մանկապատանեկան գրականություն. առանձնահատկություններն ու տարբեր կողմերը, Կանանց լուսավորիչներ և ուսումնասիրություններ, Թեհրան, 1995, էջ 184:

հետ, և հայրենասիրությունը վիպասաններին առաջնորդել է դեպի Իրանի փառավոր պատմությանն առնչվող թեմաներ:

Իրանի գրական առաջին ստեղծագործությունը, որն այդ ժամանակաշրջանում գրվել է վեպի տարբերակով և պատմական բովանդակությամբ, գրի է առնվել պարսից լեզվի ամենաաշխատասեր վիպասաններից մեկի՝ Սանաթիզադե Քերմանիի կողմից և վերնագրված է «Դամգոսթարան» (ծուղակների լարում) կամ «Մագդակի վրիժառուները»: Այս վեպի նախագիծն ընթերցողին իր հետ տեղափոխում է Սասանյան վերջին թագավոր Հազկերտ Գ-ի արքունիք, որը շրջապատված է զրադաշտ դավաճան հոգևորականների կողմից, և մի կողմից նրան սպառնում են Մագդակի հեղափոխական կողմնակիցները, մյուս կողմից առկա է արաբների հարձակման վտանգը, և այս երկու ճնշումների ներքո փլուզվում է կայսրությունը: Վեպն ավարտվում է Մագդակի կողմնակիցներից մեկի ձեռքով Հազկերտի մահվամբ և հոր կործանման վրեժը լուծող Հազկերտի որդի Հորմոզանի ձեռքով Օմար խալիֆաթի սպանությամբ: Գրողն այս վեպում պատմական իրադարձություններն օգտագործել է գրեթե իր համար ցանկալի ձևով: Այս ստեղծագործության մեջ առկա են անկապ դեպքեր ու խճճված սադրանքներ, որոնք հիշեցնում են Ալեքսանդր Դյումայի վեպերից մեկը: Հեղինակը նույնիսկ կերպարները մշակելիս ևս պատմական ճշգրտություն չունի, և նրա պատմվածքի հերոսները թագավորի ու փերիների պատմվածքների պարկեշտ ու զուսպ աշխարհի նման առաքինի ու մաքուր են, մինչդեռ պատմվածքի հանցագործները նկարագրվել են ամբողջովին սև գույնով: Ամփոփելով հարկ է նշել, որ այս վեպն այն ժամանակաշրջանի կտրվածքով ամբողջությամբ նկարագրում է Իրանում մի նոր գրականության ձևավորման նախանշանները: Այս վեպը տվյալ ժամանակաշրջանի բոլոր ստեղծագործությունների պես Իրանի անկախության վերացման պատճառները ներկայացնում է այնպես, որ դա ահազանգ լինի հետագա սերնդի համար: Վեպը 1900 թ. է գրվել, սակայն քսան տարի անց առաջին անգամ Բոմբեյում և հինգ տարի անց Թեհրանում տպագրվեց: Սանաթիզադեն իր հետագա վեպերում հետամուտ է լինում նույն պատմությանը: Նա որևէ պարտավորություն չունեի պատմական ուսումնասիրությունների հանդեպ և արվեստի տեսանկյունից որևէ տեսակի զարգացում չներկայացրեց:

«Նկարիչ Մանիի» պատմվածքը «Մանիի» կյանքի ու սիրո ռոմանտիկ պատմությունն է, որը տեղի է ունենում Հռոմի կայսր Վալերիինի հետ Շապուհի պատերազմների շրջանում՝ երրորդ դարում: Վեպը 1926 թ. տպագրվեց Թեհրանում: «Ռազմիկը» մեկ այլ պատմվածք է, որը Թեհրանում տպագրվեց

1933 թ., և թեման վերաբերում է Սասանյան առաջին թագավորների ժամանակաշրջանին: «Սևազգեստները»<sup>6</sup> պատմվածքը ևս հայտնի է որպես իրանական տարր պարունակող ստեղծագործություն, որն Աբումուլեմի ապստամբության մասին է: Սանաաթիզադեի աշխատանքները չեն սահմանափակվում պատմական խնդիրներով, և պարսկական արձակը պարտական է նրա առաջին երևակայական վեպին՝ «Խելառների ժողովը» վերտառությամբ, որտեղ իր կարգախոսը վերցրել է Սաադիի խոսքերից, այն է՝ «Բոլոր մարդիկ խելագար են, և խելագարն է խելացի»: Այս վեպում մարդկանց մի խումբը հիպնոսի քուն է մտնում և այդ քնի միջոցով տեղափոխվում երկու հազար տարի հետո, այնպիսի շրջան, որն անվանում են «բանականության դարաշրջան», և որտեղ նրանք անցնում են տարօրինակ դեպքերի միջով: Գիրքը տպագրվել է 1923 թ.: Այս հեղինակի մյուս ստեղծագործություններից է «Ռոստամը քսաներկուերորդ դարում» գիրքը<sup>7</sup>:

Պատմվածքի անվանի հեղինակներից է Միրզա Մոհամմադբադեր Խոսրավի Քերմանշահին, ով հին ազնվականներից էր և իր մի խումբ այլ հայրենակիցների նման միացավ Սահմանադրական շարժմանը: Նա Իլխանյան շրջանի իրանական գերդաստաններից մեկի պատմությունը պիեսի տեսքով գրի առավ և այն վերնագրեց «Շամսն ու Թողրան», որի բովանդակությունը կազմում են ռոմանտիկ իրադարձությունները, պատերազմները, սադրանքներն ու սերը, ողբերգությունն ու հաղթանակները, և օժտված է գաղափարախոսական ու սոցիալական արժեքներով, որոնց անդրադարձել է ռուս իրանագետ Մախալսկին:

Սանաաթիզադեի, Խոսրավիի և ուրիշների արժեքավոր գործերով հանդերձ, սահմանադրությանը հաջորդող առաջին սերնդի գրականությունը գրական հետազոտությունների մեծ մասում սկսվում է Մոհամմադալի Ջամալզադեի ներկայացմամբ:

**Սեյեդ Մոհամմադալի Ջամալզադեն** ծնվել է 1892 թ. Իսպահան քաղաքում<sup>8</sup> և իր մահկանացուն կնքել 1997 թ. Շվեյցարիայի Ժնև քաղաքում<sup>9</sup>: Նա

<sup>6</sup> **Սանաաթիզադե Քերմանի Աբ.**, Սևազգեստները, Հասան-Մարեֆաթի անվան գրքի ու գրենական պիտույքների կենտրոն, Թեհրան, 1944:

<sup>7</sup> **Սանաաթիզադե Քերմանի Աբ.**, Ռոստամը քսաներկուերորդ դարում, «Էթեթհադիե» հրատ., Թեհրան, 1934:

<sup>8</sup> Ջամալզադեի ծննդյան ամսաթվի մասին Մոհամմադ-Իբրահիմ Բաթթանի Փարիզին մի հոդվածում, որը գրել էր ազատության ճանապարհի նահատակի գրքի վերաբերյալ (Թեհրան, 1972), «Իրանցիների սթափության պատմությունը» գրքում նշված ամսա-

իրանցի ժամանակակից գրող ու թարգմանիչ է, ով հայտնի է որպես կարճ պատմվածքի հայր և պարսից գրականության մեջ ռեալիզմի ոճի հիմնադիր:

Նա իրանական կարճ պատմվածքների ժողովածուն «Լինում է, չի լինում» վերնագրով հրատարակեց 1920 թ. Բեռլինում: Ջամալզադեն իր պատմվածքներում պարզ ու հումորային լեզվով և ասացվածքների ու ժարգոնների միջոցով քննադատում է ժամանակի տիրող վիճակը: Մոհամմադալի Ջամալզադեին Սադեղ Հեդայաթի ու Բոզորգե Ալավիի հետ միասին համարում են պարսկական արդի գրականության երեք գլխավոր հիմնադիրները: Նրա «Լինում է, չի լինում» գրքում տպագրված «Պարսկերենը շաքար է» կարճ պատմվածքը սովորաբար համարվում է որպես արևմտյան ձևով գրված առաջին պարսկերեն կարճ պատմվածքը: Այս պատմվածքը, որը գրվել է պարսկական արձակի ձևավորումից հազար տարի անց, հանգուցակետ է համարվում պարսկական գրականության համար: Ավելին, Ջամալզադեի «Լինում է, չի լինում» գրքի առաջաբանը պարսկական արդի արձակի կարևորագույն գրական փաստաթուղթը և իրականում հռչակագիրն է: Առաջաբանում Ջամալզադեն ընդգծում է, որ «Արդի գրականության կիրառումն առաջին հերթին հանրային մշակույթի արձագանքն է, ապա՝ սոցիալական խնդիրների ու իրողությունների արտացոլումը»<sup>10</sup>: Ջամալզադեի պատմվածքներից շատերն արժանացել են նաև երեխաների ու դեռահասների ուշադրությանը: Դրանցից են՝ «Սար ո թահե յե քյարբաս» (թարգմ.-պարսկերեն ասացվածք՝ «միմյանց հետ հավասար» իմաստով), «Դարովմաջանին» (հոգեբուժարան), «Կարճ պատմվածքներ՝ մորուքավոր երեխաների համար», «Բացի Աստծուց ուրիշ մեկը չկար» (թարգմ.- Պարսկերենում սա միշտ հաջորդում է «Լինում է, չի լինում» կապակցությանը) և այլն:

թվերից Ջամալզադեի ծննդյան թվականը. ներկայացրել է 1892 թ.: Սակայն Ջամալզադեն 1950 թ. մայիս ամսին այի Դեհբաշիին ուղղված իր նամակում գրում է. «Ծննդյանս թվականն էիք ուզել, ընկերներս այն համարում են որպես՝ գաղտնի է, չասես, տարբերակ, սակայն իրականում դա ինձ էլ է անհայտ: Բայց համոզված եմ, որ մահվանս թվականն ավելի հստակ կլինի, քան ծննդյանս թվականը, և միգուցե գրչի ու գրենական պիտույքների հետ իմ ծանոթության արդյունքն էլ հենց դա լինի»: Նա հետագայում, ըստ համընկնումների ու ընտանեկան պատմագրությունների, ընդունել է 1892 թ.:

<sup>9</sup> 1997 թ. նոյեմբերի 8:

<sup>10</sup> «Լինում է, չի լինում», մշակումը՝ Դեհբաշ Ալիի, 379-րդ հատված՝ «Մոհամմադալի Ջամալզադեի կենսագրությունը», աղբյուրը՝ «Ֆարհանգեստան» ամսագիր, Գ տարի, աշուն, Թեհրան, 1997:

Այս ժամանակաշրջանի գրական ստեղծագործությունների կարևոր առանձնահատկություններից են քաղաքական մտքերի արտահայտումը և գաղափարախոսական խոհերի պարզաբանումը ժողովրդական լեզվով և հասարակության բոլոր դասակարգերում ներթափանցելը: Քսաներորդ դարի պարսկական գրականության ակնառու արձակագիրներից ու Իրանի ծախսակողմյան ամենահայտնի գրողն է Մոջթաբա **Բոզորգե Ալավին**<sup>11</sup>, ում ստեղծագործություններում էլ նկատելի է այս առանձնահատկությունը: Բոզորգե Ալավին ծնվել է 1904 թ. փետրվարի 2-ին Թեհրանում: 1920 թ. ուսումը շարունակելու նպատակով մեկնում է Գերմանիա և 1928 թ. ավարտում Մյունխենի համալսարանը և վերադառնում Իրան: 1933 թ. հրատարակեց «Չամեղան» («Ճամպրուկ») կարճ պատմվածքների ժողովածուն: 1935 թ. կալանավորվեց և բանտում մնաց մինչև Ռեզա Շահի իշխանության ավարտը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Բոզորգե Ալավին հայացքներով հակվեց դեպի Խորհրդային Միության կոմունիստական գաղափարախոսությունը: Կարճ ժամանակ անց՝ «մորդադի 28-ի» (19 օգոստոսի) հեղաշրջման և Մոհամմադ Մոսադեղի ձախողումից հետո՝ 1951 թ., մեկնեց Իրանից: «Նրա աչքերը» վեպը, որը նրա լավագույն ստեղծագործություններից է համարվում, տպագրվել է դրանից հետո՝ 1952 թ.<sup>12</sup>: Թեև Բոզորգե Ալավին անմիջականորեն աշխատանք չի կատարել մանկապատանեկան գրականության ոլորտում, սակայն նրա գրելու ոճը, ինչպես նաև նրա սոցիալական ու քաղաքական հայացքները կարելի է տեսնել հետագայում ձևավորված մանկապատանեկան գրական ստեղծագործություններում:

**Սադեղ Հեղայաթն** այն մարդկանցից է, ով շատ մտերիմ էր Բոզորգե Ալավիի հետ և նաև աշխատանքներ է կատարել մանկապատանեկան գրականության ասպարեզում: Մեր կարծիքով այս երկու հեղինակները փոխադարձաբար ազդել են միմյանց վրա<sup>13</sup>, և երկուսն էլ մեծ ներդրում ունեն Իրանում մանկապատանեկան գրականության զարգացման գործում:

---

<sup>11</sup> **Բոզորգե Ալավի**, ժամանակի ընթացքը, թարգմ.՝ Գոլմոհամմադի Ա. և Ֆաթահի Մ., «Նեգահ» հրատ., Թեհրան, 2006:

<sup>12</sup> **Աբրահամյան Ե.**, Իրանը՝ երկու հեղափոխությունների միջև, թարգմ.՝ Գոլմոհամմադի Ա. և Ֆաթահի Մ., «Նեյ հրատ.», ԺԳ տպ., Թեհրան, 2007:

<sup>13</sup> Իհարկե, Սադեղ Հեղայաթի ու Բոզորգե Ալավիի փոխազդեցությունը պահանջում է առանձին ու առավել լուրջ հետազոտություն: Նշված կարծիքը ձևավորվել է այս երկու հեղինակների կենսագրականի ու աշխատությունների ընդհանուր դիտարկման արդյունքում:

Սադեղ Հեղայաթը ծնվել է Թեհրանում 1903թ. փետրվարի 17-ին: 1909 թ. իր տարրական ուսումնառությունն սկսել է 6 տարեկան հասակում Թեհրանի հոգևոր վարժարանում: 1914 թ. դպրոցում հրատարակեց «Ննջեց-յալների կանչը» պատի օրաթերթը, իսկ միջնակարգ ուսումը շարունակեց «Դարոլֆոնուն» ավագ դպրոցում: Սակայն 1915 թ. աչքի հիվանդության պատճառով թողեց դպրոցը և 1916 թ. ուսումը շարունակեց ֆրանսիացիների «Սեն Լուի» դպրոցում: Դրանից հետո ուսումը շարունակելու նպատակով մեկնում է Բելգիա և Ֆրանսիա, սակայն ուսումն անավարտ թողնելով՝ վերադառնում է Թեհրան: Այդ ընթացքում ինքնասպանության փորձ է կատարում, որը ձախողվում է, և իր առաջին կարճ պատմվածքները գրում է նույն տարում: Դրանցից են «Մաղլեն» կարճ պատմվածքը, «Ողջ-ողջ թաղվածը» ժողովածուն և «Սասանի դուստր Փարվինը» պիեսը: 1930 թ. նա առավել ընդլայնված գրական գործունեություն է սկսում և մուտք է գործում գրականության ավելի նոր ոլորտներ: Ֆրանսերենից թարգմանում է կարճ պատմվածքներ Անտուան Զեխովից, Գաստոն Շերոյից, Արթուր Շնիցլերից և դրանք տպագրում է «Աֆսանե» (Առասպել) ամսագրում: Հենց այդ ժամանակաշրջանում են տպագրվում նրա «Միրզա Յադուլլահի սրտի խոսքը»<sup>14</sup> և «Արդյունքով հեքիաթը»<sup>15</sup> ստեղծագործությունները: «Օսանե» գիրքը բանահյուսությունից հավաքագրված առաջին ժողովածուն է, որը Հեղայաթն ի մի է բերել հենց այդ տարվա ընթացքում: Պարսկերենի բանահյուսության տաղերը պարունակող այս գրքի տպագրությունն ու հրատարակումը մի կողմից նման է Գերմանիայում Գրիմ եղբայրների աշխատանքին և հանգեցրեց նրան, որ առավել մեծ ուշադրության արժանանա բանահյուսության կարևորությունը երեխաների ու դեռահասների համար: 1938 թ. «Մուսիդի» («Երաժշտություն») ամսագրի հետ Սադեղ Հեղայաթի համագործակցության արդյունքում ամսագրում տպագրվեցին պարսկական որոշ առասպելներ ու ասացվածքներ, այդ թվում՝ «Մկնիկը», «Շանգուլն ու Մանգուլը» (ուլիկները), և, մեր կարծիքով, նա, այսպիսով, նախադրյալներ ստեղծեց, որպեսզի մանկական գրականությունն արժանանա հանրության ուշադրությանը:

Տպագրվել են նաև Սադեղ Հեղայաթի այլ ստեղծագործություններ, որոնք միզուցե նպատակահարմար չեն երեխաների համար, սակայն կարո-

<sup>14</sup> Այն հետագայում հայտնի դարձավ «Մոհալլել» (թարգմ. Երեք անգամ ամուսնալուծված կնոջ հետ ամուսնացող տղամարդը, որն այս քայլով օգնում է, որ կինն ամուսնանա նախկին ամուսնու հետ) անվանումով:

<sup>15</sup> Այս գիրքը նախնիների խրատական հեքիաթների պարողիան (ծաղրերգություն) է:



ղացել են ընթերցողներ գտնել դեռահասների շրջանակներում: Հեղայաթի կարճ պատմվածքներից են՝ «Երեք կաթիլ արյունը», «Մուֆն ու ստվերը» և «Թափառող շունը»: Սադեղ Հեղայաթի արժեքավոր ստեղծագործություններից են նաև «Արարման առասպելը», «Մարգարտյա թնդանոթը», «Անբանությունը», «Տիկին Ալավիեն», «Կոյր բուն» և այլն:

**Ֆազյուլահ Սոբհի Մեհթադին** այն մարդկանցից է, ով սկզբում իր աշխատանքն սկսեց Սադեղ Հեղայաթի հետ «Երաժշտություն» ամսագրում, և չի բացառվում, որ իր գրչի արվեստում ընդօրինակած լինի նրան: Նա ռադիոյի աշխատանքներն սկսվելուց հետո մուտք է գործում այդ լրատվամիջոց և 1939 թ. իր աշխատանքն է սկսում ռադիոյի մանկական ծրագրում՝ որպես հեքիաթասաց: Նա այս հաղորդման միջոցով Իրանի մանուկներին խնդրեց, որ գրի առնեն իրենց շրջանների պատմվածքները և ուղարկեն իրեն: Այս կոչի արգասիքը 11 հատոր գրքերն են, որոնցից կարևորագույններն են՝ «Ամու-Նոռուզի առասպելները», «Բալխի Դիվանը» և «Հոր պատգամը»: Որոշ մասնագետներ Սոբհի Մեհթադիի աշխատանքը՝ Իրանում մանկական բանահյուսական առասպելների հավաքագրումը, համեմատում են Եվրոպայում Շառլ Պերոյի աշխատանքների հետ:

**Սադեղ Չուբաքը** ևս այս ժամանակաշրջանի գրողներից է, ով գործունեություն է ծավալել նաև մանկապատանեկան գրականության ոլորտում<sup>16</sup>: Չուբաքը պարսկական կարճ պատմվածքի առաջին հեղինակներից է և Մոհամմադալի Զամալզադեից ու Սադեղ Հեղայաթից հետո նրան կարելի է անվանել Իրանի արդի պատմվածքների առաջատար գրողներից մեկը: Նա տիրապետում էր անգլերեն լեզվին և զբաղվում էր նաև թարգմանությամբ: Նա պարսկերեն է թարգմանել «Փինոքիոյի» հայտնի պատմությունը՝ «Փայտյա խաղատիկնիկը (մարդուկը)» վերտառությամբ: Նրա ջանքերով է թարգմանվել նաև Էդգար Ալլան Պոյի «Ագռավը» բանաստեղծությունը: Նա մեր կողմից ուսումնասիրվող ժամանակահատվածի սկզբում է ձևավորվել, իսկ դրա վերջին տարիներին արդեն իսկ լիովին հայտնի գրող էր: Սակայն իր համբավի գլխավոր մասնաբաժինը ձեռք բերեց սահմանադրությանը հաջորդող շրջանի գրողների երկրորդ սերնդի շրջանակներում: Հետևաբար, ըստ իս, նրան և սահմանադրությանը հաջորդող շրջանի մի քանի այլ գրողների պետք է

<sup>16</sup> Ծնվել է 1915 թ. և մինչև 1950 թ. հրատարակել է հետևյալ աշխատանքները՝ «Մարիոնետների թատրոնը», «Ինչո՞ւ փոթորկեց ծովը», «Կապիկը, որի վարժեցնող-պարեցնողը մահացել էր»:

համարել երկու սերունդները միմյանց հետ կապող կամուրջ:

Վերոնշյալ հեղինակների շարքից բացի, ովքեր իրենց արժանի ներդրումն ունեցան Իրանի նորագույն գրականության և հատկապես մանկապատանեկան գրականության զարգացման ու ծաղկման մեջ, ոմն Միրզա Ջաբար Ասգարզադե ներկայացվում է որպես Իրանում մանկական նորագույն գրականության հայր, ով, մեր կարծիքով, այդպես է կոչվել՝ ելնելով այն հանգամանքից, որ առաջին անձն է, որ հատուկ մտտեցմամբ քայլեր նախաձեռնեց Իրանում մանկապատանեկան գրքերի հրատարակման ու ստեղծման ուղղությամբ:

Ջաբար Ասգարզադեն ծնվել է 1885 թ. Երևանում<sup>17</sup>, որն այսօր Հայաստանի մայրաքաղաքն է: Նա իր երիտասարդ տարիքի սկզբնական շրջանում Թավրիզում մի մանկապարտեզ հիմնադրեց «Մանկական պարտեզ» անունով և ստեղծագործություններ վերարտադրեց ու գրեց երեխաների համար: 1927 թվականից ի վեր, բազում դժվարություններով հանդերձ, սկսեց մանկական գրքերի հրատարակումը, որոնց պատկերազարդումները կատարում էր ինքն անձամբ: Նրա գրքերից «Ձնե հայրիկը» հետագայում մանկապատանեկան մտավոր դաստիարակչական կենտրոնի կողմից հրատարակվեց, և գրքի համաշխարհային խորհուրդն այն ընտրեց որպես մանկական լավագույն գիրք: Նա ժողովրդական որոշ պատմվածքներ մանկապարտեզում բեմականացնելու նպատակով ներկայացրել է պիեսի տարբերակով: Այդ պիեսներից են «Ծերուկն ու բողկը», «Տիկին խավարասերը» և «Գայլն ու հովիվը»:

## **ДЕТСКАЯ ЛИТЕРАТУРА ПЕРВОГО ПОКОЛЕНИЯ ПОСТКОНСТИТУЦИОННОГО ПЕРИОДА ИРАНА (1920-1950гг.)**

ФИРУЗИМОГАДАМ МАХМУД<sup>18</sup> (ИРАН)

Статья посвящена изучению детской литературы, созданной в период, последовавший за принятием Конституции Ирана. В частности, исследуется детская литература первого поколения периода с 1920 по 1950 гг.

<sup>17</sup> **Բաղչեբան Ջ.**, Ջաբար Բաղչեբանի կենսագրությունը (մենագրություն), «Արժանգ» հրատ., Թեհրան, 1977: «Հայրս Ուրմիո (Ռեզախյեի) շրջանից էր, և մեր ընտանիքը տեղափոխվել էր Երևան՝ հրուշակագործությամբ ու շինարարական աշխատանքներով զբաղվելու նպատակով»:

<sup>18</sup> Իրան, Թերբատե Գեյդարեյխ, ֆիլիալ Թերբատե Գեյդարեյխ Իսլամского университета Азад, отделение (кафедра) персидского языка и литературы (председатель).

**Ключевые слова** – Иран, детская литература, 1920-1950 гг.

**THE FIRST GENERATION OF CHILDREN'S LITERATURE IN POST-  
CONSTITUTIONAL IRAN (1920-1950)**

FIRUZIMOGHADAM MAHMUD<sup>19</sup> (IRAN)

The article studies children's literature in the post-constitutional period of Iran. The study is particularly focused on the first generation of children's literature, created during the period between 1920 and 1950 after the adoption of the Constitution of Iran.

**Key words** – Iran, children's literature, period 1920-1950.

---

<sup>19</sup> Iran, Terbathe Heydarieh, Torbathe Heydarieh branch of the Islamic Azad University, Department of Persian language and literature (chair).